Հաշվետվություն

2023 թվականի նոյեմբերի 1-3-ը Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Արևիկ Ավոյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ), նոյեմբերի 1-3-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Իսպանիայի ռեգիստրների հանրային կորպորացիայի գրասենյակ,
   ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հողերի կառավարման աշխատանքային խմբի քարտուղարություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն՝ «Սեփականության անվտանգություն. բնական և մարդածին աղետների ազդեցությունը և դրա աշխարհատարածական և իրավական հետևանքները» թեմայով աշխատաժողովին:

5. **Քննարկված թեմաները.**

- Երկրատարածական տեղեկատվության ավելի արդյունավետ կերպով կապակցվածությունը հողի և գույքի սեփականությանն առնչվող իրավական տեղեկատվության հետ,
- Թվային լուծումների կիրառումը կայուն և ճկուն քաղաքային զարգացման, ապօրինի բնակավայրերի օրինականացման ու բարելավման գործընթացում

  Երկրատարածական տեղեկատվության և սեփականության, հողերի տնօրինման անվտանգության իրավական ասպեկտները,
- Բնական աղետների ազդեցությունը սեփականության իրավունքի անվտանգության վրա,

  Բնական և տեխնածին աղետների ազդեցությունը սեփականության իրավունքի վրա իրավական և այլ գործիքների կիրառման միջոցով
- Պատերազմի համատեքստում Ուկրաինայում հողերի տնօրինման անվտանգության ապահովումը և վերակառուցման խթանումը, վերակառուցման առարկայական ասպեկտները, հետպատերազմյան վերակառուցմանն աջակցելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծումը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառման շրջանակներում ներկայացրել եմ Հայաստանում բնական աղետների ռիսկերը, գրանցված ուժգին երկրաշարժերի վիճակագրությունը և Անդրկովկասի սեյսմիկությունը, Կադաստրի կոմիտեի դերը աղետների կառավարման գործում և այս համատեքստում երկրատարածական և իրավական լուծումները ՀՀ-ում: Շնորհանդեսի ընթացքում անդրադարձել եմ իրավական դաշտի բարելավմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես՝ սեյսմիկ անվտանգության կանոնակարգերի, շինարարական նորմերի, շինարարական թույլտվությունների ընթացակարգերի վերանայման հարցերին և այս համատեքստում նշել եմ Կադաստրի կոմիտեի կողմից նախաձեռնված Տարածական տվյալների, Գեոդեզիական գործունեության և քարտեզագրության մասին օրենքների ընդունման կարևորությունը: Ներկայացրել եմ Կադաստրի կոմիտեի կողմից գործարկված ազգային գեոպորտալի առանձնահատկությունները:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հաշվի առնելով սեփականության անվտանգության, բնական և մարդածին աղետների ազդեցության հետ կապված խնդիրների կարևորությունը՝ առաջարկվեց անցկացնել թեմային առնչվող պարբերական հանդիպումներ և ապահովել փորձագիտական շրջանակների, պատասխանատու մարմինների ներկայացուցիչների առավել լայն ներգրավվածություն:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել ակտիվ համագործակցությունը Հողային ռեսուրսների կառավարման աշխատանքային խմբի շրջանակներում:

Միաժամանակ, Իսպանիայի ռեգիստրների հանրային կորպորացիայի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցել իրավական բարեփոխումների ոլորտում:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արևիկ Ավոյան 08.11.2023 թ.